# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **ԱՆՈՒՆԸ ԱԶԳԱՆՈՒՆԸ**

Սուրեն Պապիկյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ**

Աբու Դաբի, Արաբական Միացյալ Էմիրություններ, 2019թ. սեպտեմբերի 9-ից 11-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

Համաշխարհային էներգետիկ խորհրդի քարտուղարություն

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցելու Համաշխարհային էներգետիկ 24-րդ կոնգրեսին

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

Կայացել են պանելային քննարկումներ ներքոնշյալ խորագրերով.

Էներգետիկ նոր տեսլականներ բարկեցության համար

Նորարարկան էներգետիկա.զարգման ճանապարհ

Էներգետիկ քաղաքականության նոր հրամայականները

Կառավարությունների դերը էներգետիկ ոլորտի ապագայում

Ծրագրով նախատեսված այլ թեմատիկ քննարկումներ

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

Կոնգրեսի շրջանակներում հանդիպում է կայացել Համաշխարհային էներգետիկ խորհրդի նախագահ Յ.Դեիդ Կիմի հետ: Քննարկվել է Համաշխարհային էներգետիկ խորհրդի Հայաստանի ազգային կոմիտեի հետ համագործակցության հարցեր: Ներկայացվել են Հայաստանի էներգետիկայի բնագավառի ընթացիկ իրավիճակի և զարգացման ծրագրերի մասին տեղեկատվություն:

Կոնգրեսի շրջանակներում կազմակերպված էներգետիկ ոլորտի ցուցահանդեսի ընթացքում մանրամասն ծանոթացել եմ տարբեր ընկերությունների կողմից ներկայացված նոր էներգետիկայի բնագավառի տարբեր ուղղություններով նոր տեխնոլոգիաներին և նորարարական առաջարկներին: Մասնավորապես Ռոսատոմ պետական կորպորացիայի, Չինաստանի ազգային միջուկային կազմակերպության, Կորեական ընկերությունների ներկայացուցիչները ներկայացրել են միջուկային էներգետիկայի բնագավառում փոքր մոդուլյար ռեակտորների վերաբերյալ զարգացումները, հաշվի առնելով դրանք հետագայում Հայաստանում տեղայնացնելու և կիրառելու հնարավորությունները:

8. **ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

Համաշխարհային էներգետիկ խորհրդի նախագահը ցանկություն է հայտնել այցելել Հայաստան: Հայաստան այցելելու պաշտոնական հրավերը կուղարկվի դիվանագիտական խողովակներով:
Կոնգրեսին և ցուցահանդեսին մասնակից մի շարք ընկերությունների և կազմակերպությունների հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել առանձին քննարկել էներգետիկայի բնագավառում ներդրումային ծրագրերում մասնակցության հարցերը:

9. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Շարունակել համագործակցությունը Համաշխարհային էներգետիկ խորհրդի հետ:

**ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ**

13.09.2019